# Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Աշխարհագրություն 9-րդ դասարանի դասընթացի սահմաններում նախագծի պլանավորում և իրականացում

Կատարող՝ Լիանա Ղազարյան

Դպրոց՝ Երևանի Նար Դոսի անվան հ. 14 հիմն. դպրոց

Առարկա՝ աշխարհագրություն

Կազմակերպություն՝ «Կրթություն առանց սահմանի» ՀԿ

Խմբի պատասխանատու՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Սիմա Դայան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ 1: Ուսուցման նախագծային մեթոդ……..6

1.1 Նախագծային մեթոդի պատմությունը, կառուցվածքային փուլերը……..6

1.2 Նախագծային աշխատանքի նշանակությունը և աշխատանքին ներկայացվող պահանջները……..8

Գլուխ 2: <<Մայրաքաղաք Երևան >> դասընթացի սահմաններում նախագծի պլանավորում և իրականացում……..11

Եզրակացություններ……18

Գրականության ցանկ……..……19

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Աշխատանքի արդիականությունը՝** Ժամանակակից մարտահրավերների և տեխնոլոգիաների զարգացման պայմաններում ՀՀ կրթության համակարգում արմատական բարեփոխումները ենթադրում են, որ ուսումնառության պահանջվող բարձրակարգ որակի ապահովման հիմնախնդիրների լուծումը ուսուցման նորագույն մեթոդների կիրառումն է: Արդեն իսկ պարզ է, որ ուսուցման ավանդական և ուսուցման լճացմանը տանող մեթոդները, այն է՝ գիտելիքներ սերտել տալու մեթոդները. արդի իրականության մեջ չեն կարող ապահովել ուսման ցանկալի որակ և այնպիսի կարողությունների ձևավորում , որը պահանջում է այսօրվա արագ և անկանխատեսելի զարգացումներով լի աշխարհը : Դասավանդողներիս այսօր ուսուցման մեթոդների ընտրության լայն հնարավորություններ են տրված: Ողջ պրոբլեմը կայանում է նրանում, թե մեզնից յուրաքանչյուրը որքանով է տիրապետում ուսուցման ժամանակակից մեթոդներին, ցանկալի արդյունքի հասնելու համար մեր կողմից ընտրված կամ արդեն կիրառվող ուսուցման մեթոդները ինչքանով են համապատասխանում մեր դասավանդած առարկաների ուսումնական նպատակներին:

Նախագծային մեթոդը ուսուցման համակարգ է, որի իրականացման պրոցեսում սովորողները գիտելիքներ, կարողություններ, հմտություններ են ձեռք բերում աստիճանաբար բարդացող գործնական նախագծերի պլանավորման և իրագործման ընթացքում:

Ժամանակակից աշխարհագրության նպատակն է կերտել ուրույն անալիտիկ մտածողությամբ, ինքնակրթությունը առաջնային շարժիչ ուժ համարող, բարձր պատասխանատվությամբ օժտված հասարակության լիարժեք անդամ՝ անհատականություն, որն ի զորու կլինի համարձակորեն ընդառաջ գնալ արդի մարտահրավերներին, որոնք առաջանալու են իր, իր հայրենիքի և երկիր մոլորակի առջև:

Պետության որակը պայմանավորում են կրթված, զարգացած անհատները, որոնք կազմում են հասարակության մտավոր ներուժը. հենց նրանք պետք է իրենց ծանրակշիռ մտածողությամբ պատասխանատու լինեն ոչ միայն իրենց կյանքի համար, այլև ակադեմիական գիտելիքներով զինված, գիտության նորագույն նվաճումները յուրացրած՝ ազգային արժանապատվությամբ համալրեն պետության կառավարման և հանրային կյանքի տարբեր բնագավառները՝ իրենց գիտելիքը, հմտությունները և կարողությունները ծառայեցնելով ի շահ մեր հայրենիքի:

Պայմանավորված համաշխարհային դինամիկ զարգացումներով՝ հանրակրթության ոլորտում տեղի են ունենում մի շարք փոփոխություններ, որոնք

ենթադրում են ուսուցման ավանդական մոտեցումների կատարելագործում, վերանայում և վերաիմաստավորում:

Աշխարհը փոխվել է, փոփոխվել է նաև հասարակությունը, որոնցով պայմանավորված փոփոխվել են նաև դպրոցին ներկայացված պահանջները: Սովորողների հետաքրքրությունների շրջանակները ընդլայնվել են, տեղեկատվական տեխնոլոգիաները, համացանցն ու ինտերակտիվ բազմաբնույթ ծրագրերն ու խաղերը տնօրինում են սովորողների ժամանակի մեծ մասը: Հետևաբար, արդի ուսուցման գործընթացն այնպես պետք է կազմակերպել,որ դասապրոցեսը այնքան հետաքրքրի և սովորեցնի, որ նա տանը շարունակելու, կատարելագործելու և լրացնելու ցանկություն ունենա, ժամանակը տրամադրի նոր գիտելիքներով զինվելուն:

**Աշխատանքի օբյեկտը և առարկան:** Աշխատանքի ուսումնասիրության օբյեկտն է Նախագծային ուսուցման մեթոդը, իսկ առարկան՝ նախագծային ուսուցման մեթոդի կիրառումը աշխարհագրություն 9-րդ դասարանի որևէ դասընթացում:

**Աշխատանքի նպատակը:** Աշխատանքի նպատակն է նախագծային մեթոդի միջոցով աշակերտներին հնարավորություն տալ ակտիվորեն ներգրավվել դասապրոցեսին՝ զարգացնելով աշակերտի տրամաբանական մտածողությունը և ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողունակությունը:

**Աշխատանքի խնդիրները:**Նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել Նախագծային մեթոդի պատմությունը և կառուցվածքային փուլերը
- Ներկայացնել Նախագծային աշխատանքի նշանակությունը և աշխատանքին ներկայացվող պահանջները
- Ներկայացնել <<Մայրաքաղաք Երևան >> դասընթացի սահմաններում նախագծի պլանավորում և իրականացում

**Աշխատանքում օգտագործված մեթոդները:** Աշխատանքում օգտագործվել են ուսումնասիրության հետևյալ մեթոդները՝ նկարագրության, պատմական, վերլուծության, նախագծային :

**Աշխատանքի կիրառական նշանակությունը:** Աշխարհագրության դասավանդման ժամանակակից գործընթացում հետազոտական ինքնուրույն, սակայն ուղղորդված աշխատանքները շատ ավելի արդյունավետ են, քան տեսական նյութի պարզապես սերտումը՝ առանց համադրության, համեմատման, մեկնաբանության և տրամաբանական մտածողության ձևավորման:Արդի ուսուցանումը ենթադրում է .«Սովորեցնել՝ ինչպես համակարգված և նպատակային սովորել»: Աշխարհագրության դասավանդման գործընթացում առավել նպատակահարմար է

կիրառել նախագծային ուսուցման մեթոդը, քանի որ այն հնարավորություն է ընձեռում սովորողին կատարել բազմաբովանդակ , բազմաշերտ, ծավալուն աշխատանք՝ օգտվելով տեղեկատվության տարաբնույթ աղբյուրներից, օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ, կատարել ենթադրություններ՝ ձևավորելով նոր արժեհամակարգեր, ընդլայնել իր հետաքրքրությունների սահմանները, ծանոթանալ նոր գաղափարների, իրադրությունների և տարածաշրջանների առանձնահատկություններին: Ժամանակակից ուսուցման այս մեթոդը սովորողի մոտ ձավորում է ստեղծագործական հմտություններ և կարողություններ, զարգացնում է գեղագիտական ճաշակ, սովորողի մտածողությունը և հմտությունները տեղափոխում զարգացման հաջորդ մակարդակ:

**Աշխատանքի կառուցվածքը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, 2 ենթագլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 19 էջի սահմաններում:

# ԳԼՈՒԽ 1. Ուսուցման նախագծային մեթոդ

## *1.1 Նախագծային մեթոդի պատմությունը, կառուցվածքային փուլերը:*

Համաշխարհային մանկավարժության մեջ այս մեթոդը նորություն չէ: Նրա առաջացման ակունքները կապվում են ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջ. Դյուիի և նրա աշակերտ Վ.Կիլպատրիկի հումանիտար գաղափարների, կրթական բարեփոխումների հետ, որի ներդրման արդյունքում կրթությունը ուսուցչակենտրոնից դարձավ աշակերտակենտրոն: Հետագայում այն լայն տարածում ստացավ աշխարհի այլ տարածաշրջաններում՝ մասնավորապես եվրոպական երկրներում:

Ջ. Դյուիի առաջարկած նախագծերի մեթոդը հիմնված է սովորողի՝ այս կամ այն առարկայական գիտելիքներում հետաքրքրվածության վրա :«Այսպիսով՝ շատ կարևոր է ցույց տալ սովորողներին իրենց անձնական հետաքրքրվածությունը ձեռք բերվող գիտելիքներում, որոնք կարող են պետք գալ և, անշուշտ, պետք են գալու իրենց կյանքում: Դրա համար անհրաժեշտ է խնդիր՝ վերցված իրական կյանքից, սովորողին ծանոթ և իր համար նշանակություն ունեցող, որի լուծման համար իրեն անհրաժեշտ են ձեռք բերված գիտելիքները և այն գիտելիքները, որոնք պետք է ստանա ապագայում»:

Նախագծերի մեթոդը իր նշականությամբ կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում. այն 21-րդ դարի նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներից է, որը թույլ է տալիս անհատականացնելու ուսուցման գործունեությունը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման հարցում, տեխնոլոգիա է, որը ներառում է բազմաթիվ այլ մեթոդներ: Նախագծային մեթոդի առանձնահատկություններն են՝ ուսուցողական, որոնողական, ճանաչողական, ստեղծագործական, նորամուծական, գործնական, զարգացման ուղղվածության, անձնակենտրոն: Նախագծերն իրականացնելիս ուսումնառությունը պետք է կազմակերպվի սովորողների նպատակային գործունեության միջոցով, պետք է ընդգծվի սովորողների կապը կյանքի հետ, ուսումնասիրության հիմնախնդիրները պետք է լինեն իրական կյանքից: Այս դեպքում անպայման կապահովվեն սովորողների հմտությունների, կարողությունների զարգացումը, տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու, քննադատական մտածողության զարգացումը: Փորձն ապացուցում է, որ նախագծային մեթոդը իրագործելու դեպքում սովորողները կարողանում են աշխատել ընկերների հետ, կոնկրետ այս կամ այն հիմնախնդիրը լուծելու համար կիրառել տարբեր ոլորտներից ձեռք բերած իրենց գիտելիքները:[1]

[1] https://elearning.armedu.am/

Նախագծային աշխատանքի կառուցվածքային փուլերը

1. Պրոբլեմ (հիմնահարց)՝ ուսուցիչը սովորողներին ներկայացնում է նախատեսվող նախագծի թեմաներ, առաջադրում նախագծի հիմնական պրոբլեմները, ձևակերպում նպատակներն ու խնդիրները։ Սովորողներն իրականացնում են պրոբլեմի ընկալումը, իրադրության մեջ հարմարվելը, տեղայնացնում նպատակներն ու խնդիրները։

2. Պլանավորում (նախագծում)՝ ուսուցիչը կազմակերպում և վերահսկում է նախագծի գործունեությունը, լսում է սովսրողների կարծիքները, դրա հիման վրա առաջարկում կազմավորել խմբեր, բաշխել աշակերտների դերերը խմբերում՝ ըստ նախասիրությունների և կարողությունների, պլանավորել նախագծի գործունեությունը և պրեզենտացիայի հնարավոր ձևերը։ Սովորողներն իրականացնում են խմբերի ձևավորումը, բաշխում են դերերը խմբում, նախապես պլանավորում աշխատանքը, ընտրում ներկայացման (պրեզենտացիայի) ձևերն ու եղանակները։

3. Պրպտում ( տեղեկատվության որոնում և հավաքագրում)՝ ուսուցիչը տեղեկատվության որոնման գործին չի մասնակցում։ Նա ուղղորդում և խորհրդատվություն է տրամադրում,վերահսկում խմբերի աշխատանքը, տալիս նոր գիտելիք , մասնակցում պրեզենտացիայի փորձերին։ Աշակերտներն աշխատում են անհատական, ինքնուրույն, ակտիվ, յուրաքանչյուրն իր դերով, քննարկում են իրար հետ, որոնում, ուսումնասիրում, տարբերակում և նախապատրաստում նյութեր պրեզենտացիայի համար։

4. Պատրաստում (նախապատրաստում)՝ ուսուցիչը կատարում է դիտումներ, ուղղումներ, նոր ավելի հետաքրիր գաղափարներ հաղորդում, անհրաժեշտության դեպքում սովորողներին խորհուրդներ տալիս, նախապատրաստում նախագծի պաշտպանությանը։ Սովորողները կատարում են հետազոտություններ, վերլուծում տեղեկությունները, խմբագրում , աշխատում նախագծի վրա, փորձեր անում, պատրաստվում նախագծի պաշտպանությանը։

5. Պաշտպանություն (պրեզենտացիա)՝ ուսուցիչը լսում է, սովորողներին հարցեր ուղղում, անհրաժեշտության դեպքում ուղղորդում , գնահատում նրանց կատարած աշխատանքի որակը, ծավալը և պրոբլեմի լուծման ինքնատիպությունը։ Սովորողները ներկայացնում են ուսումնական նախագիծը, մասնակցում խմբային վերլուծությանը, արդյունքների գնահատմանը։

*1.2 Նախագծային աշխատանքի նշանակությունը և աշխատանքին ներկայացվող պահանջները:*

Յուրաքանչյուր նախագծի առանցքային նպատակն է բազմաբնույթ կարողությունների ձևավորումը, որոնք արդի մանկավարժության մեջ անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ:

Այն է՝ գիտելիքների, հմտությունների, կարողունակությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև յուրաքանչյուր իրավիճակում նրանց համակենտրոնացում և կիրառելու պատրաստակամություն:

Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար.

- Պլանավորման կարողություն

ա. սովորողը պետք է կարողանա հստակ սահմանել նպատակը

բ.նկարագրել նպատակին հասնելու հիմնական քայլերը

գ.աշխատանքի ողջ ընթացքում կենտրոնանալ նպատակին հասնելու

գործընթացի վրա

- Քննադատական մտածողություն

ա.անալիտիկ՝ վերլուծական

բ.համադրական

գ. տրամաբանական

դ. համակարգված

- Ստեղծագործական մտածողություն

ա.տարածական մտածողություն

բ.ստեղծագործական մտածողության ինքնուրույն վերափոխում գործնականի

գ.կանխատեսային մտածողություն

- Ռեֆլեկտիվ հմտություններ
- Որոնողական, հետազոտական հմտություններ

ա.ընտրել անհրաժեշտ ինֆորմացիա

բ.ինֆորմացիայի համակարգում և ընդհանրացում

գ.վեր հանել հիմնավոր վարկածները

դ. փորձարկում

ե.տվյալների վիճակագրական վերամշակում

զ. գաղափարների գեներացում

- <u>Համագործակցային կոմպետենտություններ</u>

ա.կոլեկտիվ աշխատանքի կարողություն

բ.տիրապետել շփման հմտությունների

գ.իրականությանը հարմարվելու կարողություն

- <u>Կառավարման</u> կարողություններ, հմտություններ
- Շնորհանդեսների պատրաստման հմտություններ
- Ներկայացման հմտություններ

ա. խոսքի գրագետ ձևակերպում

բ.ինֆորմացիայի հստակ ներկայացում

գ. գաղափար ունենալ մատենագիտության մասին

**Նախագծի տեսակները**

1. Գործնականա կողմնորոշիչ նախագիծ (օրինակ՝ Ուսումնաօժանդակ նյութի ստեղծում)
2. Անհատական նախագիծ (օրինակ՝ Սոցիալական հարցում սեյսմիկ երևույթներին պատրաստվածության մասին)
3. Տեղեկատվական նախագիծ (օրինակ՝ Ստեղծել «ՀՀ բնական ռեսուրսներ» ինտերնետային էջ)
4. Ստեղծագործական նախագիծ (օրինակ՝ Ոչ ավանդական մոտեցում նախագծային արդյունքի ստեղծման գործում)
5. Դերային նախագիծ (օրինակ՝ Թատերական ներկայացում)

**Նախագծային աշխատանքի կազմակերպման քայլաշար**

1. Նախագծային թեմայի ընտրություն
2. Թեմայի տրոհում ենթաթեմաների
3. Նախաձեռնող խմբերի ձևավորում
4. Տեղեկատվության հավաքագրում
5. Տեղեկատվությունների քննարկում, մշակում
6. Թեմայի վերաբերյալ եզրահանգումների ձևակերպում
7. Հետազոտական հաշվետվության նախապատրաստում
8. Նախագծի պաշտպանություն (պրեզենտացիա)
9. Արդյունքների ամփոփում

**Նախագծային աշխատանքին ներկայացվող պահանջները**

Նախագծային աշխատանքը պետք է ունենա.

- թեմա և ուսումնասիրման ենթակա թեմայի հետ կապված հարցադրումներ
- աշխատաքի փուլեր (նախնական պլանավորում, գործողությունների ծրագիր, ժամկետներ, միջանկյալ հաշվետվություններ)
- աշխատանքի վերջնաժամկետ
- ակնկալվող արդյունք (հրապարակախոսություն, տեսաֆիլմ, ձեռնարկ, փաթեթ, շտեմարան, հոդված, ներկայացում, և այլն)։

Նախագծային աշխատանքն իրականացնելիս պարզվում է, որ պիտի հստակեցվի նաև սովորողների հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջները: Ահա դրանք.

- տեքստի վերլուծում, բովանդակության քննարկում, եզրակացության ձևակերպում
- ասված խոսքի հիմնավորում, ստեղծական մտածողության առկայություն

- մասնագիտական բառարանների, գիտահանրամատչելի, հանրագիտարանային գրականության, Վիքիդարանի և հանրագիտարանային հայալեզու, ինչպես նաև օտարալեզու կայքերի գործածում:[2]

## ԳԼՈՒԽ 2. <<Մայրաքաղաք Երևան>> դասընթացի սահմաններում նախագծի պլանավորում և իրականացում

Նախագծային աշխատանքը պետք է սկսել մասնակիցներին մոտիվացնելուց: Մասնակիցներին հնարավորություն պետք է տրվի զգալ, թե ի՞նչ ասել է իսկական թիմ, պետք է գրի առնել և քննարկել յուրաքանչյուր մասնակցի արտահայտած հետաքրքիր գաղափար կամ միտք: Նախագծային աշխատանքներ իրականացնելու ամբողջ ընթացքում այս երկխոսությունը ցանկալի պայման է:

***Սովորողի կարծիքը հաշվի առնելը*** հիմնաքարն է, այն պետք է պարտադիր հաշվի առնել: Սովորողների հետ միասին պետք է ստեղել աշխատանքային ուղեցույց, պետք է աշխատել համատեղ ստեղծված աշխատանքային կանոնների համաձայն: Ընդհանուր համաձայնության պետք է գալ աշխատանքի ընթացքում ծագած դժվարությունները հաղթահարելիու համար: Պետք է հաշվի առնել մասնակիցներից յուրաքանչյուրի անհատական նախասիրություններն ու անձնական հատկությունները, պետք է կատարել աշխատանքին հստակ աշխում: ***Նախագծի ղեկավարը*** պետք է կատարի նախագծի նախնական պլանավորում, պետք է ապահովի առաջնային գիտելիք պարունակող տեղեկատվությունը, որը կկողմնորոշի է սովորողներին, թե ինչպես, ինչ ուղղությամբ սկսել աշխատանքը, պետք է տա համացանցային հղումներ, գրականություն և այլ անհրաժեշտ նախնական տեղեկություններ: Պետք է հետևի նախագծի աշխատանքի ընթացքին և տրամաբանական ավարտին հասցնի նախագիծը՝ վերջնական արտադրանքի տեսքով:

***Առարկայական ուսուցիչն*** պետք է ապահովի իմասնագիտական խորհրդատավություն սովորողին, օգնի որոնել տեղեկատվական գրականություն, այլ նյութեր, մեդիանյութեր, օգնի կոնկրետ հարցեր լուծելիս առաջացած դժվարությունները հաղթահարել, փոխանցի համապատասխան հմտություններ:

Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ ընդհանուր գործ կատարելիս սովորողներն էլ ավելի են մտերմանում, փորձում են օգտակար լինել միմյանց, համախմբվում են մեկ ընդհանուր նպատակի շուրջ, ընկերանում են, իրար ուսումնասիրում-բացահայտում են, իրարից սովորում են, գնահատում են ընկերության արժեքը, հասկանում են դրա առավելությունները: Մի

[2] https://hy.wikipedia.org/

խոսքով՝ նախագծի վրա աշխատելիս առավել ցայտուն են դառնում սովորողի ունակությունները:

**Նախագծային աշխատանքի առաջին փուլ**

Ստեղծվում են աշխատանքային խմբեր: Նախագիծը իրականացնում են խմբով, անդամների միջև աշխատանքի բաժանում է կատարվում, խումբը ընտրում է համակարգող, որը նաև վերահսկում է մյուսների աշխատանքը: Նախագծի կատարումը վերահսկելու համար կազմում են աշխատանքային ժամանակացույց՝ միջանկյալ արդյունքներով.

- գրանցվում են արդյունքին ներկայացվող պահանջները.

**Աշխատանքի երկրորդ փուլ**

- նախագծի իրականացման ընթացքում կատարվում են հետազոտական աշխատանքներ
- նախագծի արդյունքի ներկայացում (արդյունքը պետք է ունենա հասարակական արժեք)
- աշխատանքների գնահատում
- ստացված արդյունքի համապատասխանությունը սկզբնական պահանջներին:

**Աշխատանքի երրորդ փուլ**

- նախագիծը ենթադրում է վերանայում
- ծրագրի կիրառման արդյունքում նկատված թերությունների, ստացված դիտողությունների, առաջարկությունների քննարկում և համապատասխան փոփոխությունների կատարում

**Կատարված աշխատանքի ներկայացում**

Սովորողը պետք է կարողանա ներկայանալ և ներկայացնել իր կատարած աշխատանքը

- համառոտ նկարագրել կատարված աշխատանքը՝ ինչ խնդիր են դրել, ինչու են ընտրել հենց այդ թեման, ինչպիսին է աշխատանքի արդյունքը, որն է նախագծի արդյունավետությունը.
- խոսել նախագծի ընթացքում ծագած դժվարությունների և աջակցությունների մասին. պետք է հիմնավորել՝ աշխատանքի ընթացքում ինչն են համարում անարդյունավետ, իսկ ինչը՝ օգտակար.

- վերաբերմունք արտահայտել՝ կոնկրետ ներկայացնողի համար որքանով է օգտակար այդ նախագծին մասնակցելը, ինչ սովորեց, ինչը ճշտեց, ինչ է կարողանում ավելի լավ անել աշխատանքը կատարելուց հետո, ինչը ինքը կկիրառի հետագայում:

Իրական նախագծային աշխատանքի արդյունքում սովորողները պետք է ձեռքբերումներ ունենան՝ միասին ստեղծելով շոշափելի արդյունք:[3]

*Այժմ անդրադառնանք դասընթացի բովանդակությանը, որպիսի ավելի հասկանալի լինի թե աշակերտները ինչ հետաքրքիր և բովանդակալից աշխատանք էին կատարել:*

Արգիշտի Ա արքան իր տիրակալության 5-րդ տարում՝ մ.թ.ա. 782թ., հիմնադրում է Էրեբունի ամրոց-քաղաքը՝ ներկայիս Երևանը, որը դառնում է երկրի վարչատնտեսական կարևորագույն կենտրոններից մեկը: Էրեբունու հիմնադրման տարեթիվը ստույգ հայտնի է մեզ հասած սեպագիր արձանագրությունից. «Խալդի աստծո մեծությամբ, Արգիշտին՝ Մենուայի որդին, ասում է. այս հզոր ամրոցը կառուցեցի, սահմանեցի Էրեբունի անունը Բիայնիլի երկրի հզորության համար, ի սարսափ թշնամական երկրների: Արգիշտին ասում է. հողը ամայի էր, հզոր գործեր ես այնտեղ կատարեցի Խալդի աստծո մեծությամբ, Արգիշտի՝ Մենուայի որդի, թագավոր հզոր, թագավոր Բիայնիլի երկրի, տերը Տուշպա քաղաքի»:

Մեր մայրաքաղաքի անունը գալիս է դեռևս ուրարտական շրջանից՝ Էրեբունուց: Ուրարտագիտությունից հայտնի է, որ ուրարտերեն «Բ» հնչյունը հայերենում հնչում է «Վ»: Այստեղից էլ Էրեբունի անունը ձևափոխվել է և դարձել Երևան:

Պահպանված պատմական այդ արձանագրությունը հնարավորություն է տվել գիտնականներին հստակեցնելու Երևանի ծննդյան տարեթիվը՝ մ. թ. ա. 782թ.: Էրեբունի-Երևանը հիմնադրվել է Հռոմից 29 տարի առաջ, Բաբելոնի, Նինվեի ու Պերսեպոլիսի հասակակիցն է, բայց, ի տարբերություն վերջիններիս, դարձել է 21-րդ դարի ծաղկուն քաղաքներից մեկը:

Երևանը համայնք է՝ Երևանի բնակչության հանրություն: Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Երևանը իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ: Երևանն ունի բյուջե, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք: Երևանում տեղական ինքնակառավարումը հիմնվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների վրա՝ ապահովելով Երևանի բոլոր վարչական շրջանների համաչափ զարգացումը:

[3] https://escs.am/

Երևանի վարչական սահմանները սահմանված են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով:

Երևանի տարածքը կազմում է 223 քկմ, բնակչությունը՝ 1075.1 հազ. մարդ:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիսարևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա:

Քաղաքի կլիման խիստ ցամաքային է՝ շոգ ու չոր ամառ և համեմատաբար խստաշունչ ձմեռ:

Երևանը վարչական սահմանով հարում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին:

Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն:[4]

Մշակույթը, ցանկացած ազգի, նրա ստեղծած պետության անցած ուղու որակական արտահայտությունն է: Մարդկության ընդհանուր գանձարանում մնայուն արժեքների հիմնական բաղադրիչն է մշակույթը, որը նաև այն ստեղծողի մտավոր ներուժի չափանիշ է: Հայաստանն աշխարհին հիմնականում ներկայացել է ստեղծագործական մտքի դրսևորումներով: Դրա վկաները մեր երկրով մեկ սփռված կոթողներն ու տաճարներն են, Մատենադարանում, այլ երկրների գրադարաններում ու թանգարաններում պահպանվող գրքերը, գեղարվեստական գործերն ու քանդակները, իսկ հայ երգահանների ստեղծագործությունները, ազգային երաժշտությունը յուրահատուկ տեղ ունեն մարդկության հոգևոր զարգացման գործում:

Երևանը 19-րդ դարից ի վեր դարձել է հայոց մշակույթի կարևորագույն կենտրոններից մեկը, իսկ անկախ պետության մայրաքաղաք դառնալուց հետո՝ զարգացման հիմնական օջախը:

Երևանի տարածքում հաշվառված է պատմության և մշակույթի 401 հուշարձան, որից 288-ը պետական են, իսկ 113-ը՝ Երևանի համայնքային սեփականություն: Հաշվառված պատմության և մշակույթի հուշարձաններից 155-ը առանձին կանգնած հուշարձաններ են, 33-ը քարայր-կացարաններ են, 20-ը՝ խաչքարեր, 20-ը՝ հուշաղբյուրներ, 19-ը՝ հուշակոթողներ, 11-ը՝ տուն-թանգարաններ, 6-ը՝ եկեղեցիներ:

Երևանում գտնվող 57 թանգարաններից 4-ը Երևանի քաղաքապետարանի ենթակայության են: Դրանք են՝ Երևան քաղաքի պատմության, Ժամանակակից արվեստի, Կարեն Դեմիրճյանի և Պատմահնագիտական թանգարանները: Երևանի

[4] Մ.Մանասյան Ա.Հովսեփյան, Աշխարհագրություն Հայաստան 9-րդ դասարան մաս 1-ին: Երևան 2020, էջ 102

18 թատրոններից 3-ը ևս գործում են Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ (Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական, Պատանի հանդիսատեսի և «Միեր Մկրտչյան» արտիստական թատրոնները):

2010թ. «Էրեբունի պատմահնագիտական արգելոց թանգարան» ՊՈԱԿ-ն անցել է Երևանի քաղաքապետարանի ենթակայությանը: Էրեբունի ամրոցի պատմական, մշակութային և գիտական արժեքներն առավելագույնս բացահայտելու նպատակով մշակվել է հուշարձանի վերականգնման և վերակառուցման ծրագիր:[5]

Մեր վարդագույն Երևանը առանձնանում է պատմամշակութային հրաշագեղ կառույցներով , ինչպիսիք են՝

- Հանրապետության հրապարակը, որը մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետական համալիրներից մեկն է
- Կասկադը , որտեղ արվեստը, քաղաքային աշխույժ կյանքը և ճարտարապետությունը, կանաչ տարածքները հիանալի միաձուլվում են իրար:
- Մատենադարանը, որտեղ գտնվում է հին հայկական ձեռագրերի աշխարհի ամենամեծ հավաքածուներից մեկը
- Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրը
- Հայաստանի ազգային պատկերասրահը
- Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը
- Հայաստանի պատմության թանգարանը
- Նաիրի կինոթատրոնը, որը Երևանի ամենահին կինոթատրոնն է: 1926 թվականին այստեղ ցուցադրվել է առաջին խորհրդային հայկական ֆիլմը՝ Զարեն:

Նշենք նաև որ 2003 թվականին Հանրապետության հրապարակի վերանորոգման ժամանակ հայտնաբերվել է ստորգետնյա քաղաք :

Իհարկե իրենց վեհաշուք տեսքով առանձնանում են նաև եկեղեցական համալիրները՝ Երևանի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, Կապույտ մզկիթը, Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցին, Սուրբ Աստվածածին եկեղեցին, Երևանի Սուրբ Զորավոր Աստվածածին եկեղեցին, Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցին և այլ եկեղեցական համալիրներ:[6]

Նշենք նաև մանրամասն աշխատանքում անդրադարձել ենք զբոսաշրջությանը, խոհանոցին, տրանսպորտին, նորաձևությանը և իհարկե մի շարք առաջարկություններ ենք արել որոնք կնպաստեն քաղաքում զբոսաշրջության զարգացմանը և քաղաքի ճանաչմանն ամբողջ աշխարհով մեկ:

[5] https://www.yerevan.am
[6] https://hy.wikipedia.org

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9 ԴԱՍԱՐԱՆ 15.09.2023թ.

Ուսուցչի՝ Լ.Ղազարյան

# ԴԱՍԻ ՊԼԱՆ

| | |
|---|---|
| **Թեմա** | «Մայրաքաղաք Երևան» |
| **Տիպը** | Դաս-ցերեկույթ |
| **Մեթոդ** | Նախագծային աշխատանք |
| **Դիդակտիկ նյութեր** | Պրոյեկտոր, պաստառներ, հանդերձանք, քարտեզ |
| **Միջառարկայական կապ** | Ինֆորմատիկա, պատմություն, երաժշտություն, |
| **Դասի նպատակը** | • **Ուսուցանող՝** ձևավորել գիտական գիտելիքներ ՀՀ մայրաքաղաք Երևանի ՝ աշխարհագրական, մշակույթային, զբոսաշրջային և վարչաքաղաքական կարգավիճակի վերաբերյալ:<br>• **Զարգացնող՝** զարգացնել սկզբնաղբյուրներից տեղեկա-տվություն ընտրելու, վերլուծելու, դասակարգելու, կազմակերպչական կարողությունները և ստեղծագործական գործունեության փորձը, համագործակցային հմտությունները:<br>• **Դաստիարակչական՝** նպաստել աշակերտների մոտ հետաքրքրության ձևավորմանը, որպիսի ճանաչեն, սիրեն և պահպանեն իրենց Հայրենիքն ու հայրենիքի փոքրիկ անկյունը: |
| **Նախագծային աշխատանքի կազմակերպման քայլաշար** | 1. նախագծային թեմայի ընտրություն<br>2. թեմայի տրոհում ենթաթեմաների<br>3. նախաձեռնող խմբերի ձևավորում<br>4. տեղեկատվության հավաքագրում, քննարկում, |

մշակում

5. հետազոտական հաշվետվության նախապատրաստում
6. նախագծի պաշտպանություն (պրեզենտացիա)
7. արդյունքների ամփոփում

***Վերջնարդյունք*** Աշակերտները ձեռք բերեցին գիտական գիտելիքներ մայրաքաղաք Երևանի աշխարհագրության, պատմության, զբոսաշրջության, մշակույթի, ավանդույթների, բարքերի, խոհանոցի մասին: Գիտակցեցին որ Երևանը ինքնատիպ քաղաք է հարյուրավոր քաղաքների մեջ: Սովորեցին համագործակցել խմբի անդամների հետ, ձեռք բերեցին նոր հմտություններ և ձևավորեցին նոր կարողություններ:

*Նախագծային աշխատանքը կատարվեց Նար-Դուսի անվան հ.14 հիմն. դպրոցի 9-րդ դասարանի աշակերտների հետ 15.09.2023 թ-ին:*

*Նախածային աշխատանքը ստացված էր, խմբում ընդգրկված բոլոր աշակերտները մեծ պատրաստակամությամբ հանդես եկան, ստացան նորանոր գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:*

## Եզրակացություններ

Ուսումնասիրելով թեմային վերաբերող առկա գրականությունը, համացանցային տվյալները և մեր սեփական հետազոտությունները՝ հանգեցինք մի շարք եզրակացությունների.

- Նախագծային մեթոդը ուսուցման համակարգ է, որի իրականացման պրոցեսում սովորողները գիտելիքներ, կարողություններ, հմտություններ են ձեռք բերում աստիճանաբար բարդացող գործնական նախագծերի պլանավորման և իրագործման ընթացքում:
- Աշխարհագրության դասավանդման գործընթացում առավել նպատակահարմար է կիրառել նախագծային ուսուցման մեթոդը, քանի որ այն հնարավորություն է ընձեռում սովորողին կատարել բազմաբովանդակ , բազմաշերտ, ծավալուն աշխատանք՝ օգտվելով տեղեկատվության տարաբնույթ աղբյուրներից, օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ, կատարել ենթադրություններ՝ ձևավորելով նոր արժեհամակարգեր, ընդլայնել իր հետաքրքրությունների սահմանները, ծանոթանալ նոր գաղափարների, իրադրությունների և տարածաշրջանների առանձնահատկություններին:Ժամանակակից ուսուցման այս մեթոդը սովորողի մոտ ձավորում է ստեղծագործական հմտություններ և կարողություններ, զարգացնում է գեղագիտական ճաշակ, սովորողի մտածողությունը և հմտությունները տեղափոխում զարգացման հաջորդ մակարդակ:
- Նախագծային աշխատանքը պետք է սկսել մասնակիցներին մոտիվացնելուց: Մասնակիցներին հնարավորություն պետք է տրվի զգալ, թե ի՞նչ ասել է իսկական թիմ, պետք է գրի առնել և քննարկել յուրաքանչյուր մասնակցի արտահայտած հետաքրքիր գաղափար կամ միտք: Նախագծային աշխատանքներ իրականացնելու ամբողջ ընթացքում այս երկխոսությունը ցանկալի պայման է:
- Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ ընդհանուր գործ կատարելիս սովորողներն էլ ավելի են մտերմանում, փորձում են օգտակար լինել միմյանց, համախմբվում են մեկ ընդհանուր նպատակի շուրջ, ընկերանում են, իրար ուսումնասիրում-բացահայտում են, իրարից սովորում են, գնահատում են ընկերության արժեքը, հասկանում են դրա առավելությունները: Մի խոսքով՝ նախագծի վրա աշխատելիս առավել ցայտուն են դառնում սովորողի ունակությունները:
- Իրական նախագծային աշխատանքի արդյունքում սովորողները պետք է ձեռքբերումներ ունենան՝ միասին ստեղծելով շոշափելի արդյունք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մ.Մանասյան Ա.Հովսեփյան, Աշխարհագրություն Հայաստան 9-րդ դասարան մաս 1-ին: Երևան 2020, էջ 102

2. https://www.yerevan.am

3.https://hy.wikipedia.org

4. https://escs.am/

5. https://elearning.armedu.am/